Ընդունելով և միւս տեսակի զէնքերը՝ 6000 հոգի — ուրեմն, գործող բանակում կանոնաւոր մարտական ուժեր կան 25,000 հոգի:

Աւելացնելով դրանց վրա նաև թիկունքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակոյտը, առողջապահական սպասաւորներին— ընդհանուր թիւ 30 տոկոսը, կը ստանանք բանակի ամբողջ կազմը 34,000 հոգի, խմբերի հետ միասին—մօտ 40,000 հոգի:

Կանոնաւոր թիւրքական ուժեր Կարս—Ալեքսանդրապոլ ուղղութեան վրա պէտք է ընդունել 4 դիվիզիա, իւրաքանչիւրի մէջ 3000 հոգի, ընդամենը 12,000: Սուրմալուի ուղղութեան վրա՝ 1 թիւրքական դիվիզիա — 3000 հոգի, որը սպառնում է Երևանին: Նախիջևանի ուղղութեամբ՝ բոլշևիկեան ուժեր մօտ 2000 հոգի: Եւ Ղազախ—Դիլիջանի ուղղութեամբ՝ ազրբէջանցիք և բոլշևիկներ: Այդ կանոնաւոր զօրքերի թիւը պէտք է, ընդհանուր առմամբ, հաշուել 20,000 սին:

Եթէ դրանց աւելացնենք ոչ-կանոնաւոր ժողովրդական ուժերը, քրդերին և թշնամի զինուած ազգաբնակութիւնը, այդ դէպքում թշնամու ուժերի թիւը պէտք է որոշել բոլոր չորս ուղղութիւնների վրա ոչ պակաս 30,000 հոգուց: Ահա մրցակից կողմերի անկողմնապահ թուահամարը:

Սրա հետ միաժամանակ պէտք է ի նկատի ունենալ Հայաստանի մեկուսացած դրութիւնը, նաւթից, նաւահանգստից դուրկ լինելը, արտաքին աշխարհից կտրուած լինելը (որովհետև ամբողջ հաղորդակցութիւնը Վրաստանի և Եւրոպայի հետ կախուած է մաղից — երկաթուղային գծից, որը շուտով կտրուեց): Թնդանօթի ռումբերի պաշարը վերջանում է: Ցրտերը աւելի սաստկանում են: Հայաստանը շղթայուում է երկաթէ օղակով: Գրաւուած և վտանգի ենթարկուած շրջաններից ազգաբնակութիւնը հաւաքուում է Հայաստանի սրտի մէջ»:

Դաշնակիցները, սակայն, ոչինչ չունէին ասելիք: Անգլիայի ներկայացուցիչ Ստոկսը միայն որոշ պատասխան տուեց Ֆորէյն Օֆիսի կողմից. Անգլիան ոչնչով չի կարող օգնել. հայերին ոչինչ չի մնում, բայց եթէ իբրև երկու չարեաց փոքրագոյնը — հաշտուել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Նոյ. 23-ին Ալեքսանդրապոլ մեկնեց Հայաստանի հաշտարար պատուիրակութիւնը — Ա. Խատիսեան (նախագահ), Ա. Գիւլխանդանեան, Ս. Ղորղանեան, Վ. Մինախորեան և այլն: Մի օր յետոյ այնտեղ գնաց և Բ. Մդիւանին, որ Լեգրանի հետ եկել էր Երևան և խորհրդակցել կառավարութեան հետ իր անելիքների մասին: Թիւրքերը մերժեցին ընդունել Մդիվանիի միջնորդութիւնը և նա Ալեքսանդրապոլում զբաղուեց հակադաշնակցական ժողովներով ու ճառերով:

Հաշտութեան բանակցութիւնները սկսուեցին նոյեմբեր 25-ին: Իբրև նախապայման, հայերը յայտարարեցին, որ իրենք հրաժարուում են Սևրի դաշնագրից: Պայմանների իր նախագծով հայկական պատուիրակութիւնը պահանջում էր ամբողջ Ռուսահայաստանը, Վանի սանջակը, Բիթլիսի վիլայէթից մի կտոր, Մուշի սանջակը, Բայազէտի սանջակը և ելք դէպի ծով Բիգա նաւահանգստով: Թիւրք պատուիրակութիւնը մի ընդարձակ հակազեկուցումով հերքեց հայերի պահանջի իրաւացի լինելը, ցոյց տալով, որ Թիւրքահայաստանի յիշեալ մասերում հայերը երբեք մեծամասնութիւն